# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 9 | Օգոստոս | 2019 թ. |
| **[4] Առաքման ամսաթիվ** | | |
| 9 | Օգոստոս | 2019 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 5208137241 |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| Պայմանագիր | |
|---|---|
| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| 18 Հունվար, 2018 թ. | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Արտադրանք, ապրանք առաքող անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 6 9 0 2 0 8 7 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 6 9 0 2 0 8 7 / 1 |
| [10] Անվանումը | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [11] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ — N 1570015001210100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [14] Լրացուցիչ տվյալներ | |

## Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

| | |
|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [18] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834 |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [20] Լրացուցիչ տվյալներ | |
| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն: |
| | Լիազորագիր — Համար: |
| | Լիազորագիր — Ամսաթիվ: |
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ ակցիզ. հարկ | Այդ թվում՝ ավելաց. արժեքի հարկ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 19160319 բ/գ. | հատ | 1 | 39400 | | 39400 | | |
| Ընդամենը | | | | | | 39400 | | |

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անունը, ազգանունը)

Ստացող՝
(անունը, ազգանունը)

09/08/2019 13:06:25

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

*Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին*

«30» հուլիսի, 2019 թ. ք.Վանաձոր

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ավագ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական՝ Վ. Ժ. Գրիգորյանս, վերանայելով վարույթիս թիվ 19160319 քրեական գործի նյութերը.

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի**

Իշխան Ռոդիկի Միքայելյանը 2019 թվականի հուլիսի 27-ին՝ ժամը 09.45-ի սահմաններում, օգտվելով Վանաձոր քաղաքի Մոսկովյան 21 հասցեում գտնվող շենքի մոտ կայանված, Իրինա Մաքսիմովային պատկանող՝ չմաքսազերծված, առանց հաշվառման համարանիշերի «BMW» մակնիշի ավտոմեքենայի դռները փականով չկողպված լինելու հանգամանքից, ուրիշի գույքին տիրանալու նախնական դիտավորությամբ, բացել է ավտոմեքենայի առջևի աջ դուռը,ապօրինի մուտք գործել պահեստարան ծառայող հիշյալ ավտոմեքենա և առջի աջ նստատեղից, Իրինա Մաքսիմովայի ներկայությամբ, բացահայտ հափշտակել՝ կողոպտել է վերջինիս պայուսակը, որում եղել են խոշոր չափերով՝ 2.018.112 դրամ 8 լումային համարժեք 4.240 ԱՄՆ դոլար, 339.300 ՀՀ դրամին համարժեք՝ 45.000 ռուսական ռուբլի գումար և 50.000 ՀՀ դրամ արժողության դրամապանակը և դիմել փախուստի, սակայն նկատելով, որ Իրինա Մաքսիմովան իրեն հետապնդում է՝ Իշխան Միքայելյանը պայուսակից հանել և հափշտակել է վերոհիշյալ՝ խոշոր չափերով՝ 2.018.112 դրամ 8 լումային համարժեք 4.240 ԱՄՆ դոլար և 339.300 ՀՀ դրամին համարժեք՝ 45.000 ռուսական ռուբլի գումարը և 50.000 ՀՀ դրամ արժողության դրամապանակը, իսկ պայուսակը նետել է:

Դեպքի առթիվ ՈԼՄՎ Վանաձոր քաղաքի Տարոնի բաժնում 2019 թվականի հուլիսի 27-ին ՀՀ քր. օր.-ի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով, հարուցվել է թիվ 19160319 քրեական գործը, որը նախաքննություն կատարելու համար ուղարկվել է Լոռու մարզային քննչական վարչություն և ընդունվել վարույթ:

Կատարած արարքի համար Իշխան Ռոդիկի Միքայելյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով:

Համաձայն Լոռու մարզի հոգենյարդաբանական դիսպանսերից ստացված տեղեկանքի, Իշխան Միքայելյանի մոտ առկա է հոգեկան հիվանդություն՝ «թեթև աստիճանի մտավոր հետամնացություն՝ արտահայտված աֆեկտիվ անկայունությամբ, վարքային խանգարումներով, ափիոնային թմրամոլություն» ախտորոշմամբ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ պարզաբանելու համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-245-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով.

## ՈՐՈՇԵՑԻ

1.Սույն քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ «Լոռու մարզի հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲ ընկերության փորձագետներին:

2.Փորձաքննության ներկայացնել սույն որոշումը, մեղադրյալ Իշխան Միքայելյանին, իսկ քրեական գործի նյութերը կներկայացվեն փորձաքննության կատարման օրը:

3.Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը:

ա. Իշխան Միքայելյանը հիշյալ արարքը կատարելուց առաջ, արարքի կատարման պահին և դրանից հետո տառապել կամ տառապում է արդյոք քրոնիկ հոգեկան հիվանդությամբ, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ, տկարամտությամբ կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակով, որը նրան զրկել է իր գործողության վտանգավորությունը գիտակցելուց կամ ղեկավարելուց, եթե այո, ապա ինչպիսի:

բ. Իշխան Միքայելյանը ներկայումս իր հոգեկան վիճակով հանրության համար վտանգավորություն ներկայացնում է, թե ոչ, հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հաստատությունում, արդյոք հարկադիր բուժման հակացուցումներ կան, թե ոչ, կարող է արդյոք մասնակցել դատաքննչական գործողությունների, թե ոչ:

Փորձագետին խնդրել պատասխանել այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

4.Փորձագետին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝ Վ. Ժ. Գրիգորյան